# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2019թ. թիվ 348-Ա

Ն. ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6)-րդ կետի և 130-րդ հոդվածի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի դատախազի միջնորդագիրը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Նառա Մկրտչյանին 2019թ. մայիսի 16-ից ազատել «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2018 թվականի մայիսի 18-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Նառա Մկրտչյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի քարտուղարության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով սույն որոշումը եռօրյա ժամկետում հանձնել Ն. Մկրտչյանին պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. մայիսի 15
ք.Վանաձոր